

Վարդան Ա. Ալեքսանյան  
Պատմ. գիտ. թեկնածու

## ԽԱՉԻԿ Ա ԱՐՇԱՐՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

### ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվ հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտությունը  
10-րդ դարի վերջին քառորդին\*

**Բանալի բառեր** – Արգինա, հոգևոր թեմ, եկեղեցի, դավանաբանական վեճ, դավանաբանական նամակագրություն, հայոց ուղղադավան հավատք, քաղկեդոնականություն, մետրոպոլիտ, Սեբաստիա, Ատոլիկ, Սամվել Կամրջաձորեցի:

### Մուտք

10-րդ դարի վերջին քառորդին Բագրատունյաց թագավորությունը քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքի ուղին էր բռնել: Երկրի առաջընթացի գործում զգալի դեր ուներ հայոց եկեղեցին, որն ըստ կարելվույն աջակցում էր հայոց պետականության ամրապնդմանն ուղղված Բագրատունիների ջանքերին:

10-րդ դարի վերջին քառորդը բնորոշվում է հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների սրմամբ, երբ կայսերական եկեղեցին, առանց միջոցների խտրականության, հայերին պարտադրում էր քաղկեդոնական դավանանք: Նորովի բորբոքված հայ-բյուզանդական դավանաբանական վեճերում հայ հոգևորականությունը սկզբունքային էր և միասնական: Քաղաքական հարցերում Բյուզանդիայի նկատմամբ զիջողականություն ցուցաբերող Հայաստանը կրոնական հարցերում ուներ անզիջում դիրքորոշում, ուստի հակաքաղկեդոնականությունը նույնությամբ չէր համապատասխանում կայսրության նկատմամբ նրա քաղաքական դիրքորոշմանը<sup>1</sup>:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2020:

1 Տե՛ս Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, էջ 116:

# 1. Խաչիկ Ա Արշարունու աթոռակալման հանգամանքները

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայոց եկեղեցին գլխավորում էր հայրենասեր և գործունյա կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունին: Նա վերստին միավորում է իր նախորդների՝ Վահան Ա Սյունեցու (965-970) և Ստեփանոս Գ Սևանցու (970-972) հակամարտության պատճառով երկփեղկված հայրապետական իշխանությունը, վերջ է տալիս հայոց եկեղեցին ներսից պառակտող և թուլացնող խռովություններին: Որպես խոհեմ գործիչ՝ նա մեղմում է նաև Բագրատունիների ու Արծրունիների հակամարտությունը: Նորընտիր հայրապետը կառուցողական հարաբերություններ է հաստատում աշխարհիկ իշխանությունների հետ, համախմբում հայ հոգևորականությանը և «միապետեալ խաղաղացոյց գաշխարհս Հայոց»<sup>2</sup>:

Պատմիչները դրվատական խոսքերով են բնութագրում Խաչիկ Ա Արշարունուն՝ շեշտելով նրա խոր աստվածաբանական գիտելիքները և դավանաբանական հարցերում սկզբունքային կեցվածքը: Մատենագիրները նրան որակում են «սրբասէր և քրիստոսասէր» անձ, որ «բանիս վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց», «զարժանաժառանգ այր»<sup>3</sup>: Մատթեոս Ուռհայեցին նրան անվանում է «այր փառաւոր եւ տեղեակ աստուածային կտակարանացն»<sup>4</sup>: Մնբատ սպարապետը Խաչիկ Ա-ին բնութագրում է «այր իմաստուն յոյժ»<sup>5</sup>: «Աստուածապատի եւ սուրբ Հայրապետն մեր Խաչիկ», - նրա մասին այսպիսի պատվատիտղոսներով է խոսում ժամանակակից մատենագիր Ուլիտանեսը՝ ավելացնելով, որ Խաչիկը գրություններ ուներ «ընդ դէմ երկաբնակացն»<sup>6</sup>:

Մատենագիրների վկայությամբ՝ Խաչիկը հայոց կաթողիկոս Անանիա Մոկացու (941-965) ազգականն էր՝ քրոջ որդին<sup>7</sup>: Սա նշանակում է, որ վաղ տարիքից նրա մտավոր կյանքի և հոգևոր գործունեության կազմակերպողը եղել է հայոց հայրապետը: Վերջինիս հոգածությամբ ապագա կաթողիկոսը ստանում է եկեղեցական դաստիարակություն և կրթություն: Խաչիկի հետագա գործունեությունը ցույց է տալիս, որ նա հայոց ուղղափառ դավանանքի սկզբունքների պահպանման հարցերում Անանիա Մոկացու հետևորդն էր և գործելակերպի շարունակողը: Կրթություն ստանալով Կամր-

2 **Ստեփանոս Տարանեցի Առողիկ**, Պատմութիւն Տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, հանդես Գ, գլ. Թ, էջ 758:  
 3 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Եր., 1961, էջ 88, «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, գլ. ԾԲ, էջ 212:  
 4 **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 38-39:  
 5 «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի», Փարիզ, 1859, էջ 41:  
 6 **Ուլիտանէ Եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, գլ. Ա, էջ 453:  
 7 Տէս **Ստեփանոս Տարանեցի Առողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Թ, էջ 758, տես նաև **Սամուէլ Անեցի և շարունակողներ**, Ժամանակագրութիւն, Եր., 2014, էջ 176, «Ստեփաննոսի Սիւնեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԽԴ, էջ 175, գլ. ԾԲ, էջ 212, **Վարդան Բարձրաբերդեցի**, Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 123:

ջաճորի կամ Կապուտքարի վանքի հռչակավոր դպրոցում՝ Խաչիկը ձեռնադրվում է եպիսկոպոս և ստանձնում Արշարունյաց գավառի հոգևոր առաջնորդությունը<sup>8</sup>:

Խաչիկի անունը առաջին անգամ հիշատակվում է Ասողիկի «Պատմության» մեջ՝ որպես քաղկեդոնականության դեմ մարտնչող բարձրաստիճան հոգևորականների ոչ պաշտոնական առաջնորդի: Վահան Ա Սյունեցի կաթողիկոսի գործունեությունը քննելու առիթով 970 թ. Ասիում գումարվում է եկեղեցական ժողով, որը գլխավորում էր Արշարունյաց եպիսկոպոս տեր Խաչիկը<sup>9</sup>: Ժողովն աթոռանկ է հռչակում Վահան Սյունեցուն և նոր կաթողիկոս ընտրում Սևանի վանահայր Ստեփանոսին, որը վայելում էր Աշոտ Գ Ռոդրմածի (953-977) համակրանքը: Ստեփանոսի մահից հետո «իրամանաթագաւորին Աշոտայ, որ Ողորմածն կոչիր», գումարվում է ազգային-եկեղեցական նոր ժողով, և «կացուցանեն յաթոռն հայրապետական զերանելի այրն աստուծոյ գտէր Խաչիկ»<sup>10</sup>: Սամվել Անեցու վկայությամբ՝ Արշարունյաց եպիսկոպոս Խաչիկը կաթողիկոս է ընտրվել 973 թ.<sup>11</sup>, իսկ ըստ Ասողիկի՝ 972 թ.<sup>12</sup>: Պատմիչների վկայություններում, ըստ էության, հակասություն չկա, եթե նկատի ունենանք, որ ընտրությունը տեղի է ունեցել 972 թ. վերջին, «այսինքն է 973 տարոյ սկիզբները, ծնունդէ գատիկ միջոցին»<sup>13</sup>: Տեր Խաչիկը պաշտոնապես աթոռակալել է 19 տարի՝ 973-992 թթ.: Սակայն իրականում կաթողիկոսի գործառույթները նա կատարել է տակավին իր օծումից առաջ: Երբ այդ հարցը քննում ենք ընթացիկ իրադարձությունների լույսի ներքո, տեսնում ենք, որ փաստորեն նա պաշտոնավարել է 20-21 տարի<sup>14</sup>: Խաչիկ Ա-ի նախորդ Ստեփանոս Գ-ն աթոռանկ կաթողիկոս Վահան Ա Սյունեցու և Աբուսահլ իշխանի հետ բանակցելու նպատակով 971 թ. ուղևորվում է Վասպուրական: Բանակցելու փոխարեն նրան կալանավորում են և բանտարկում Կոտորի բերդում: Այդտեղ մնալով ավելի քան մեկ տարի՝ նա մահանում է: Այդ մեկամյա ժամանակահատվածում՝ 971-972 թթ., որը ժամանակագիրը բնորոշում է «անէութին հայրապետական աթոռոյն»<sup>15</sup>, կաթողիկոսությունը փաստորեն վարել է Խաչիկ Արշարունին: Այսինքն՝ եթե նրա պաշ-

8 Տե՛ս **Օրմանյան Մ.**, Ազգապատում, հատ. Ա, էջմիածին, 2001, սյունակ 1313:

9 Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756:

10 **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 87-88: Ուշայեցին հաղորդում է, որ Խաչիկին կաթողիկոս է ձեռնադրել Ստեփանոս Գ-ն մահից առաջ (տե՛ս **Մատթէոս Ուշայեցի**, նշվ. աշխ., էջ 38): Ժամանակագրի այս տեղեկությունը հավաստի չէ, քանի որ Խաչիկի կաթողիկոսական օծմանը նախորդող ավելի քան մեկ տարվա ժամանակա-միջոցում Ստեփանոս Գ-ն արգելափակված է եղել Կոտորի բերդում:

11 Տե՛ս **Սամուէլ Անեցի**, նշվ. աշխ., էջ 177:

12 Տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Թ, էջ 758:

13 **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 776, սյունակ 1311:

14 Ըստ 12-րդ դարի մատենագիր Մխիթար Անեցու Խաչիկը պաշտոնավարել է 21 տարի (տե՛ս **Մխիթար Անեցի**, Մատենա աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատափրութամբ **Հ. Մարգարյանի**, Եր., 1983, էջ 69, տե՛ս նաև **Տաշեան Յ.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 99): Այս հարցում Մատթէոս Ուշայեցու աշխատության մեջ ակնհայտ շփոթ կա. նա հայտնում է, որ Խաչիկ Ա-ի կաթողիկոսությունը տևել է 6 տարի 986-992 թթ. (տե՛ս **Մատթէոս Ուշայեցի**, նշվ. աշխ., էջ 40):

15 **Սամուէլ Անեցի**, նշվ. աշխ., էջ 176: Նույնը հաստատում է նաև Կիրակոս Գանձակեցին՝ ասելով, որ կաթողիկոսական աթոռը «ամ մի անվերակացու լեալ» (տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 87):

տոնական աթոռակալության 19 տարիներին հավելում ենք ևս մեկ-մեկուկես տարի, ապա սկզբնաղբյուրների հիշատակած 20-21 տարին դառնում է իրատեսական: Ատոդիկի վկայությամբ՝ իր առաքելությունը կատարած հայոց հայրապետը մահացել է 992 թ.՝ խոր ծերության հասակում, և թաղվել «հանգստարանին ըստ հիւսիսոյ կուսէ եկեղեցւոյն Արգինայի, գոր ինքն շինեալ էր»<sup>16</sup>:

Հայ եկեղեցական կառույցի բարեկարգումը և զարգացումը իր առաքելությունը համարող գործունյա կաթողիկոսի կարևոր ձեռնարկներից մեկը եղավ «գտուն կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ, յեզերս Ախուրեան գետոյ, ի հանգստարանի Տեառն Անանիայի Հայոց վերադիտողի»<sup>17</sup> նորոգելը: Արգինայում տեղ Խաչիկի պատվերով նշանավոր ճարտարապետ Տրդատը սրբատաշ քարով «շինեաց գտուրբ կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիք, հաստահեղոյս արձանաք գմբէթարդ խորան երկնանման, հանդերձ եւս երիւք եկեղեցեալք»<sup>18</sup>: Ճարտարապետական արժեք ունեցող շինությունների կառուցումը նոր հմայք և պաշտոնական տեսք է հաղորդում հայոց հոգևոր կենտրոն Արգինային<sup>19</sup>: Արգինան նորոգելով և կայուն աթոռանիստ դարձնելով՝ Խաչիկ Ա-ն երկու կարևոր խնդիր էր լուծում. առաջին՝ չեզոքացնում էր Արծրունիների ազդեցությունը հայոց կաթողիկոսության վրա<sup>20</sup>, երկրորդ՝ հոգևոր կենտրոնը քաղաքական կենտրոնից հեռացնելով՝ ապահովում էր կաթողիկոսության հարաբերական անկախությունը և ինքնուրույնությունը քաղաքական իշխանությունից<sup>21</sup>: Արգինայի կաթողիկէ եկեղեցու շինարարությունն ավարտվում է 990 թվականին. այն շքեղ կահավորանք է ստանում, ներսից զարդարվում է ոսկեթել հյուսվածքի վարագույրներով, ոսկե, արծաթե և «ամենազարդ պայծառութեան ջահաբորբոք լուսաւոր» անոթներով:

Հայ դպրության ավանդներին հավատարիմ կաթողիկոսը Արգինայի կաթողիկոսարանին կից ստեղծում է ուսումնագիտական կենտրոն՝ վարդապետարանով և մատենադարանով: Կարճ ժամանակում այստեղ հավաքվում են «գաստուածախաւս կտակս յոլվակի ստացեալ, զԳիրս

16 Ստեփանոս Տարանեցի Ատոդիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԼԱ, էջ 810:  
 17 Նույն տեղում, էջ 758:  
 18 Նույն տեղում, էջ 758-759: Ուսումնասիրողների կարծիքով՝ Արգինայի կաթողիկեն ժամանակագրական առումով Տրդատ ճարտարապետի առաջին հայտնի խոշոր գործն է: Այն նաև Տրդատի ամենաքիչ ուսումնասիրված գործերից է (տես **Հասարայան Մ.**, Արգինայի կաթողիկեն, «Հանդես ամսօրեայ», 1977, N 1-12, էջ 208):  
 19 Կաթողիկոսական կենտրոնը 944 թ. Աղթամար կղզուց Արգինա է տեղափոխել Անանիա Մովսեսին (941-965): Սակայն, ինչպես վկայում է Սյունյաց պատմիչը, Ստեփանոս Գ Սևանցին (970-972) կարճ ժամանակ մինչև Վասպուրական մեկնելը, նստել է Անիում (տես «Ստեփանոսի Սյունեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԾԲ, էջ 212, հմմտ. **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 773, սյունակ 1308): Նախածեռնելով Արգինայի կաթողիկոսարանի նորոգումը՝ Խաչիկ Ա-ն հասկանում էր, որ Արգինան հոգևոր կենտրոնի իր առաքելությունը կարող է կատարել մինչև քաղաքամայր Անիում կաթողիկեի կառուցվելը: 1001 թ. կաթողիկոսարանը տեղափոխվում է Անի, որտեղ կենտրոնանում է աշխարհիկ և հոգևոր գերագույն իշխանությունը:  
 20 Հովհաննես Դրասխանակերտցուն (898-929) հաջորդած երեք կաթողիկոսների՝ Ստեփանոս Բ Ոշտունու, Թեոդորոս Ա Ոշտունու և Եղիշե Ա Ոշտունու պաշտոնական նստավայրը (929-944 թթ.) եղել է Վասպուրականի Աղթամար կղզին: Նշյալ երեք հայրապետները գտնվել են Վասպուրականի Արծրունյաց նախարարական տան ուղղակի ազդեցության տակ և վայելել նրա հովանավորությունը:  
 21 Տես **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, Եր., 2008, N 3, էջ 6:

սուրբս զամաքելասացս եւ զմարգարէաքարոզ պատգամս, հանդերձ ամե- նայն վարդապետացն ձայնիք»<sup>22</sup>: Այս դպրոցում ուսուցանվել են աստվա- ծաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, քերականություն և մեկնողական արվեստ: Ասողիկը կարևոր տեղեկություններ է հաղորդում այստեղ գիտակրթական գործունեություն ծավալած գործիչների մասին: Գլխավոր դասասացներն են եղել Հովհաննես ուսուցչապետը, որը «մեծ գիտութեամբ բացայայտէր զգիտութիւն Գրոց սրբոց», Կարինի Հնծուց վանքի միաբանության առաջնորդ «առատ գիտութեամբ գերմաքուր» Հով- սեփ ուսուցչապետը, Կիրակոս գիտնականը, որ «վարուք առաւել քան թէ բանիք վարդապետէր», վայելչաբան Սարգիսը «յաշխարհէն Աղուանից, որ ի մանկութենէ զԳիրս սուրբս ի բերան առեալ»<sup>23</sup>:

Արգինայի վարդապետարանի շրջանավարտներից էր Բագրևանդ գա- վամի իշխան Ատրներսեհը, որը եղել է «այր կորովի և յոյժ հանճարեղ, բա- նիբուն և իմաստասէր»: Նա «հզոր գիտութեամբ և գարմանալի ատենախո- սութեամբ» Կոստանդնուպոլսում հայերի և հույների դավանաբանական վե- ճերում հիմնավորել ու պաշտպանել է հայոց միաբնակության սկզբունքնե- րը<sup>24</sup>: Այս փաստը վկայում է, որ «մեծ Արգինայի» դպրեվանքում կրթությունը և գիտությունը ժամանակի չափանիշներով գտնվում էին ամենաբարձր մա- կարդակի վրա: Այստեղ պատրաստում էին ոչ միայն հոգևոր նվիրապե- տության սպասավորներ ու բարձրակարգ տեսաբաններ, այլև բարձրագույն կրթությամբ պետական գործիչներ<sup>25</sup>:

## 2. Հայոց եկեղեցական նվիրապետության ընդարձակումը

Տեր Խաչիկը կարևորում էր նոր եկեղեցական թեմերի հիմնումը, որն ուղղակիորեն առնչվում էր Հայաստանի քաղաքական և հոգևոր սահման- ների ամրապնդման խնդրին: Այդ ուղղությամբ նրա ձեռնարկները զգալի արդյունք են տալիս: 976 թ. Խաչիկ Ա Արշարունու պաշտոնական կոնդա- կով վերականգնվում է Նախիջևանի եպիսկոպոսական թեմը<sup>26</sup>: Նախի-

22 Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Թ, էջ 759:

23 Նույն տեղում:

24 Տես Մատթոս Ուռնայեցի, նշվ. աշխ., էջ 183-184:

25 Տես Խաչերեան Լ., Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները (V-XVI դդ.), հատ. Ա, Լիզպոն, 1998, էջ 362:

26 Կոնդակի բնագիրը Նախավկայի վանքում առաջին անգամ տեսել և ընդօրինակել է Հովհ. Շահխաթունյանը: «Սկզբնաղբրութիւն մենաստանիս եղեալ է յերկուց սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի ըստ վկայութեան պարզևագրի թագաւորին Աշոտոյ և կաթողիկոսին Խաչկայ պարունակեալ ի մի կոնդակ և գրեալ ի թուականի հայոց միե. այն է՝ յամի 976. յաւուրս առաջնորդութեան մենաստանիս արքեպիսկոպոսին Բաբգենի. որոյ օրինակն պահեալ ի մենաստանիս ընդ այլ հնութեանց է ըստ այսմ»,- գրում է 19-րդ դարի առաջին կեսի նշանավոր եկեղեցական գոր- ծիչ և հետազոտող Հովհ. եպիսկոպոս Շահխաթունյանը (**Շահխաթունեան Յովհ.**, Ստորագրութիւն կաթողիկէ Էջ- միածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատ. Բ, Էջմիածին, 1842, էջ 304): Կոնդակի վավերականության և բնա- գրին հարազատ լինելու վերաբերյալ կասկած է հայտնում Հայր Ալիշանը (տես **Ալիշան Դ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 516, ծանոթ. 1): Ուսումնասիրողների կարծիքով՝ կոնդակը գրվել է 1320-ական թվականներին (տես **Տեր- Վարդանեան Գ., Սահակեան Զ.**, Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի 976 թուականի կոնդակը՝ տրուած Դարաշաճմի սուրբ Ստեփանոս Նախավկայի վանքին, «Էջմիածին», 2012, N 7, էջ 94):

ջևան գավառում դեռևս 4-րդ դարից գոյություն է ունեցել հոգևոր վիճակ, որը «սահմանեալ էր ի նախնեացն մերոց եւ սուրբ հայրապետացն մերոց Տեառն Ներսիսի թոռին մերոյ սուրբ Լուսաւորչին»<sup>27</sup>: Կաթողիկոսը թեմի առաջնորդ է ձեռնադրում «ընտիր այր» Բաբկեն Սյունուն, որը նաև իր վաղեմի համախոհներից էր<sup>28</sup>: Բաբկենը հիմնավորապես վերանորոգում է Մաղարդա վանքի Սուրբ Ստեփանոս Նախավկայի առաքելահիմն եկեղեցին<sup>29</sup>, որի նավակառուցային տոնակատարություններին ներկա են լինում Աշոտ Գ Ողորմած թագավորը՝ «ազատագունդ գաւրաւք», Խաչիկ կաթողիկոսը, հայոց և վրաց երևելի իշխաններ: Հայրապետական կոնդակով<sup>30</sup> հստակեցվում են նորաստեղծ թեմի և հարկատու կալվածքների սահմանները: «Հոյակապ և հոչակաւոր մայրաքաղաքն Նախիջևան, ի Կոզ գաւառն բոլորովին. Ի Խոյ որ է Զարևանդ գաւառն և ամենայն վիճակն իւր բոլորովին, մինչ ի Նուան ի Ղարադայն, որ բաժանի Առաքելոց յերկրէն և գնայ մինչև ի Ղարաթափան, և բաժանի ի Սալմաստայ, ի յերապխայ մինչև ի Մարանդայ Գիրիւէն. Մարանդ իւր վիճակովն Իշրինթալն իւր երկրովն, գնա մինչ ի դղեակն Խոսրովու. ի յԱզատ և ի Գիրան. ի Զուղայ և իւր վանքն, ի յԱտապատ և իւր վանքն, ի Շամբ և իւր վանքն, ի Զաղացտեղն, ի յԱրարքն և իւր վանքն, և յամենայն Դիտապալացոյ յարևելեան հարաւոյ»<sup>31</sup>:

Նորաստեղծ թեմը տնտեսապես ուժեղացնելու համար նվիրաբերվում են «հնձէքս և հայրենիքս և դաստակերտ և ընծայ հին Մաղարդայ վանից Ս. Ստեփանոս նախավկային, Տիրամայր Ս. Աստվածածինն և Ս. Գէորգ Զարավարին»<sup>32</sup>: Լինելով հույժ հավատացյալ անձ<sup>33</sup>՝ Աշոտ Ողորմածը Զարևանդ գավառի կուսակալ Վաչե իշխանի ձեռամբ 976 թ. գրված ընծայագրով վանքին նվիրում է ընդարձակ տիրույթներ<sup>34</sup>: Այս դեպքերից հինգ

27 «Խաչիկ Կաթողիկոսի առաջնոյ կոնդակը փրկական 976 թուին», «Արարատ», էջմիածին, 1868, Գ, էջ 32: Տես նաև «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1655-1839)», պրակ I, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով, կազմեց **Հար. Արուստիանյան**, Եր., 1941, էջ 6:

28 Տես «Խաչիկ Կաթողիկոսի առաջնոյ կոնդակը փրկական 976 թուին», էջ 31-32: Բաբկեն Սյունու անունը առաջին անգամ հիշատակվում է Առողիկի «Պատմության» մեջ: Նա Ստեփանոս Գ Սևանցի կաթողիկոսի պատվիրակության կազմում մեկնում է Վասպուրական՝ բանակցելու այնտեղ ապաստանած աթոռանկ կաթողիկոս Վահան Ա Սյունեցու (965-970) հետ (տես **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ը, էջ 756):

29 Մաղարդա վանքը գտնվում էր Զուղայի մոտակայքում: Ըստ ավանդության՝ այն հիմնադրել է Բարդուղիմեոս առաքյալը (տես «Ստեփաննոսի Սինեաց Եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական», գլ. ԿԲ, էջ 250):

30 Այս կոնդակում տեղ խաչիկը տիտղոսավորված է «Տէր Խաչիկ կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարգ արեւելեան տանս» (տես **Յովսէփեան Գ.**, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, սյունակ 132): Պատմաբան Ռ. Մաթևոսյանի կարծիքով Բագրատունիների «տէրութիւնը» միաժամանակ կոչվում էր «արեւելից տունը» (տես **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը ու վարչական կարգը, Եր., 1990, էջ 215): Հ. Ոսկյանը վերահրատարակել է Մաղարդա վանքին վերաբերող կոնդակները: Նախիջևանի թեմի հիմնադրման կոնդակում Խաչիկ Ա կաթողիկոսի տիտղոսում «արեւելեան տանս»-ի փոխարեն հիշատակվում է «առաքելական տանս» (տես **Ոսկյան Հ.**, Մաղարդայ Նախավկայի վանքին կոնդակները, «Հանդես ամսօրեայ», 1941, N 7-12, էջ 232, հմմտ. «Արարատ», էջմիածին, 1868, Գ, էջ 33):

31 «Խաչիկ Կաթողիկոսի առաջնոյ կոնդակը փրկական 976 թուին», էջ 32-33, «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», էջ 6:

32 Նույն տեղում:

33 Տես **Նիխազարյան Ա.**, Աշոտ Գ Ողորմածի դարաշրջանը, մաս Ա: Հայոց թագավորության վերելքը (953-966), «Վեմ», Եր., 2019, N 3, էջ 49:

34 Տես «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», էջ 3-5:

տարի անց՝ 981 թ. ապրիլին, Մաղարդա վանքի Սուրբ Նախավկա ուխտի է գնում Աշոտ Ողորմածի դուստր Հռիփսիմեն: Բարեպաշտ կույսը հոր օրինակով մեծամեծ նյութական նվիրատվություններ է կատարում, վանքին է կտակում Աստապատի իր դաստակերտը, այգիներ, արտեր, ինչի վերաբերյալ «գրեցաւ կտակագիրս անքակ ի թ. ՆԼ (981) տունարին Արամեան մնացուածիս, և ահեկ ամսոյ ԺԶ-ին և ի հոգեւոր հովվութեան տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի Շինողի և ըստ մեծի տէրութեան արեւելից և հարաւոյ Հայոց, Սահակայ՝ Աշոտ յորջորջեալ անուամբ Շահնշահի»<sup>35</sup>:

Խաչիկ Ա կաթողիկոսը հոգևոր թեմ է հիմնում նաև Գուգարք նահանգի Տաշիրք գավառում: Նորակառույց Սանահին վանքի Ս. Աստվածածին եկեղեցին դարձնում է մայր եկեղեցի և եպիսկոպոսի աթոռանիստ: Եկեղեցական-հասարակական գործիչ Ս. Ջալալյանի ջանքերով պահպանված՝ Սմբատ Բ արքայի 979 թ. թվագրված հրովարտակի կրկնօրինակում ասվում է, որ Խաչիկն այստեղ եպիսկոպոս է ձեռնադրում վանքի վանահայր Եսայուն<sup>36</sup>: Նորաստեղծ հոգևոր թեմի տարածքը ներառում էր «գամենայն երկրին Տաշրաց զվերին և գներքին մինչև ի լեառն բագում յասկոյս և յայնկոյս մինչև ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչև ի սահմանս Տփխիսայ և Վրաց. և ի սահմանս Նիգ գաւառին, և մինչև ի սահմանս Կայինթոյ, և գահմանս Ծաղկոցաց մինչ ի սահմանս տանն Շիրակայ»<sup>37</sup>: Հոգևոր կենտրոնի կարգավիճակ շնորհելով Սանահինի վանքին՝ կաթողիկոսը մեծացնում է նրա կարևորությունն ու բարձրացնում հեղինակությունը: Սանահինը դառնում է հայոց եկեղեցու առաջնակարգ աթոռանիստերից մեկը: Ի հիշատակ իր ծնողների՝ Սմբատ Բ-ն հսկայական նյութական նվիրատվություններ է կատարում վանքին, արքայական հրովարտակներով շնորհում զանազան արտոնություններ:

Անխնջ կաթողիկոսի գործունեության ուշագրավ դրվագներից է Հայաստանից դուրս հոգևոր թեմերի ստեղծումը, հայոց եկեղեցու աշխարհագրության ընդլայնումը: Զինվորական ծառայության անցնելով կայսերական բանակում՝ 10-րդ դարում մեծ թվով հայեր իրենց ընտանիքներով տեղափոխվում և բնակություն էին հաստատում Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում և Կապադովկիայում<sup>38</sup>: Տարածաշրջանում հայ ազգաբնակչության թվաքանակի ավելացումն առաջացնում է հոգևոր սպասավորության պահանջ: Հոգևոր թեմերի ստեղծումն, անշուշտ, նպաստում էր հայության՝ որպես հավաքական ամբողջության կազմակերպվածության մեծացմանը:

35 «Կտակագիր Հռիփսիմէ արքայադստեր յանուն Նախավկայի վանուց Մաղարդայ», «Արարատ», 1875, է, էջ 260-262, **Յովսէփեան Գ.**, նշվ. աշխ., հատ. Ա, սյունակ 137-142: Հիմնավոր քննության ենթարկելով Աշոտ Գ Ողորմածի գահակալության ժամանակաշրջանը՝ պատմաբան Ա. Եղիազարյանը եզրակացնում է, որ կտակագրում հիշատակված Սահակը Աշոտի երկրորդ անունն է (տես **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 64):

36 Տես **Ջալալեանց Ա.**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հատ. Ա, Թիֆլիս, 1842, էջ 44, «Հաղբատ և Սանահին վանքերը (967-1300)», «Արարատ», 1901, Ե-Զ, էջ 272-273:

37 **Ջալալեանց Ա.**, նշվ. աշխ., էջ 44:

38 Տես **Розен В.**, Император Василий Болгаробойца, извлечения из летописи Яхьи Антиохийского, СПб, 1883, էջ 5, 15:

«Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետին Հայոց սփռեալ տարածեցաւ ազգս Հայոց զկողմամբքն արեւմտից, մինչեւ ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորոց եւ ի Տարսոն Կիլիկեցոց եւ ի Սուլնդայ եւ յամենայն գաւառսն յայնոսիկ»<sup>39</sup>, - հաղորդում է Ասողիկը: Բուն Հայաստանից դուրս հոգևոր թեմեր ստեղծելով՝ հեռատես կաթողիկոսը կանխում էր այլ էթնիկ միջավայրերում հայերի արագ ձուլման գործընթացը և խթանում ազգային ինքնության գիտակցումը: Այս քայլերը պատասխանն էին այն մարտահրավերի, որ նետել էր Բյուզանդական կայսրությունը օտար միջավայրերում ապրող հայությանը:

Հայոց հովվապետի հեղինակությունն այնքան բարձր էր, որ նրա հետ հաշվի էին նստում նաև օտարազգի իշխողները, մասնավորապես՝ հարևան մահմեդական ամիրաները: Այդ մասին է վկայում հետևյալ փաստը. 988 թ.՝ Ատրպատականի ամիրա Աբուլ-Հայջա-Ռավվադյանի մահից հետո, Գողթնի ամիրա Աբու Դուլաֆը վերագրավեց Դվինը և նրանից հարավ-արևելք ընկած Երասխի հովիտը<sup>40</sup>: Բագրատունյաց պետության առջև ծառայած վտանգը կանխվեց Խաչիկ Ա կաթողիկոսի միջամտությամբ: Նրա միջնորդությամբ Գողթնի ամիրա Աբու Դուլաֆի և Սմբատ Բ շահնշահի միջև կնքվեց խաղաղության դաշինք<sup>41</sup>: Դաշինքով հայոց թագավորությունն ապահովագրվում էր մահմեդական ամիրաների հարձակումներից, Հայաստանում նրանք այլևս չէին շարունակելու կենտրոնախույս ուժերին խրախուսելու իրենց գործելակերպը:

Խաչիկ կաթողիկոսի պաշտոնավարման ժամանակահատվածում Հայաստանում գահ են բարձրացել Բագրատունի երկու արքաներ՝ Սմբատ Բ Տիեզերակալը (977-990) և Գագիկ Ա-ն (990-1020): Թեև մատենագիրների աշխատություններում հիշատակություններ չկան նրանց արքայական օժանդակ արարողությունների վերաբերյալ, սակայն ենթադրելի է, որ հիշյալ թագավորների թագադրումը կատարվել է Խաչիկ Արշարունու ձեռամբ:

### 3. Հայ-բյուզանդական եկեղեցական հակամարտության արտացոլումը Խաչիկ Ա-ի նամակագրության մեջ

Խաչիկ Ա Արշարունու աթոռակալության ժամանակահատվածը համընկնում է հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների լարման նոր շրջափուլին, որը սկիզբ էր առել 9-րդ դարի երկրորդ կեսից: Հայաստանի նվաճման հարցը ներառված էր Բյուզանդիայի կրոնական քաղաքականության օրակարգում: Բյուզանդական եկեղեցին հայոց եկեղեցու

39 Ստեփանոս Տարաճեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. 1Ա, էջ 810:

40 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. Բ, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք Բ (IX դարի կես-XVII դարի առաջին կես), Եր., 2014, էջ 140:

41 Տե՛ս Ստեփանոս Տարաճեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԺԹ, էջ 769:



նկատմամբ որդեգրել էր զավթողական քաղաքականություն՝ ձգտելով իր դավանաբանական սկզբունքները պարտադրելու միջոցով ձուլել հայերին: Գնալով ավելի էին խորանում հայ և հույն հոգևորականության փոխադարձ անհանդուրժողականությունն ու հակամարտությունը: Դավանաբանական շղարշով քողարկված քաղկեդոնական Բյուզանդիայի և միաբնակ Հայաստանի վեճերը քաղաքական ու մշակութային խոր արմատներ ունեին<sup>42</sup>: Կայսր Վասիլ Բ-ի (976-1025) օրոք պետության և եկեղեցու քաղաքականությունը արտաքին և ներքին հարցերում ամբողջությամբ համապատասխանեցված էր, ուստի նման կարևոր հարցերում այդ երկու ինստիտուտները հանդես էին գալիս որպես մեկ ամբողջություն<sup>43</sup>: Ամենագոր կայսրը հայերի նկատմամբ վարում էր ձկուն քաղաքականություն: Անհրաժեշտության դեպքում չէր հրաժարվում հայերին սիրաշահելուց: Տայքի նվաճման հարցը Բյուզանդիայի քաղաքական օրակարգում ներառելուց հետո նրանց նկատմամբ հանդուրժողականությունն այն աստիճանի էր հասցրել, որ 1000 թ. «հրամայեաց համարձակ լինել յամենայն գործս հաւատոց և հնչեցուցանել զձայն ժամահարի»<sup>44</sup> Սեբաստիայի հայկական եկեղեցիներում:

10-րդ դարի վերջերին գիտության և արվեստի խոշորագույն կենտրոն Կոստանդնուպոլսում, որը «նոր Հռոմի» համարում ուներ, Վասիլ Բ-ն հաճախակի էր կազմակերպում հայ և հույն վարդապետների դավանաբանական վեճեր: Տեսական վեճերին մասնակցում էին ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ գործիչներ: Հայ մատենագիրները հպարտությամբ են խոսում այդ վեճերում հաղթած վարդապետների մասին՝ հիշատակելով «այր կորովի և յաղթող» Սամվել Կամրջաձորեցուն, Հակոբ Սանահնեցուն կամ Քարափնեցուն, «յոյժ ճարտարաբան» Գագիկ Աբասյանին<sup>45</sup>:

Սակայն 10-րդ դարի վերջերին Բյուզանդիայի ենթակայության տակ գտնվող հայաբնակ նահանգներում նոր թափ ստացան հայերի կրոնական հավաճանքները<sup>46</sup>: Հույն հոգևորականությունն անթաքույց ատելություն ուներ հայերի նկատմամբ, ինչի պատճառը հայերի կրոնական ինքնուրույնությունն էր: Նրանք գիտակցում էին կրոնի դերը հայոց լեզվի, գրի, կենցա-

42 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմ., առաջաբանը, ծանոթագր., Հ. Բարթիկյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ LXIV:

43 Տե՛ս **Скабаланович Н.**, Византийское государство и церковь в XI веке, СПб, 1884, էջ 361:

44 **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԽԳ, էջ 822: Հայերի նկատմամբ Վասիլ Բ-ի կրոնական հանդուրժողականության մասին վկայում է 11-րդ դարի վերջին և 12-րդ դարի առաջին քառորդում ապրած հեղինակ Պողոս Տարոնացին: Հույն թեոփիստե փիլիսոփային ուղղված թղթում նա գրում է. «Մեծ թագաւորն Հռոմոնց Վասիլն զայդ ամենայն բնութիւնդ վասն հաւատոց ոչ է արարեալ ընդ հայս» (**Պողոս Տարոնացի**, Թուրք ընդդէմ Թեոփիստայ, Կ. Պօլիս, 1752, էջ 273):

45 Տե՛ս **Մատթոս Ուռշայեցի**, նշվ. աշխ., էջ 44, 161, 183:

46 Կրոնական հավաճանքներին զուգահեռ՝ կայսրությունն իրականացնում էր նաև հայերի տեղահանությունն ու վերաբնակեցումը Բալկաններում Բյուզանդիայի հյուսիսային սահմանները բուլղարների դեմ ամրապնդելու համար (տե՛ս **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ի, էջ 769, տե՛ս նաև **Իսկանյան Վ.**, Հայբյուզանդական քաղաքական հարաբերությունների պատմությունից (10-11-րդ դդ.), Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկ. մանկ. ինստ. գիտ. աշխ. ժողովածու, N 6, Եր., 1957, էջ 110):

ղային առանձնահատկությունների, տարազի պահպանման հարցում<sup>47</sup>: Ուստի հայերին դասում էին հերետիկոսների շարքը, իսկ հույն ուղղափառ եկեղեցին արգելում էր շփումը հայերի հետ, ներառյալ ամուսնությունը:

Բյուզանդիայի արևելյան թեմերի մետրոպոլիտները հայ բնակչությանը և հոգևորականությանը պարտադրում էին ընդունել քաղկեդոնականություն: Այս գործում հույն հոգևորականության գինանոցը բավականին հարուստ էր՝ «փափուկ ուժի» կիրառումից, այն է՝ հունադավանություն ընդունած հայերին օրենքով առավելություններ տալուց մինչև քաղկեդոնականության բռնի պարտադրում: Բռնությունների պատճառով առանձին հայ հոգևորականներ ստիպված ընդունում էին քաղկեդոնականություն, իսկ Հայաստանում մնկի մնան աճում էին քաղկեդոնիկ եպիսկոպոսությունները<sup>48</sup>:

Ժամանակին այս ճնշումների դեմ համառորեն պայքարում էր Անանիա Մոկացի կաթողիկոսը (941-965), որը հրամայել էր հունադավան ծեսով մկրտված հայերին վերստին մկրտել<sup>49</sup>: Հայերի նկատմամբ կիրառած բռնություններով առանձնապես աչքի էին ընկնում Մելիտինեի և Սեբաստիայի<sup>50</sup> մետրոպոլիտները: «Կանացի հովիւքն եւ մետրապալիտն Սեբաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ»<sup>51</sup>, - անթաքույց ցատումով գրում է Ժամանակակից պատմիչ Ատողիկը: Սեբաստիայի մետրոպոլիտը ճնշում է գործադրում տեղի նշանավոր հայ հոգևորականների նկատմամբ, և նրանց «երկաթեղէն կապանաւք հասուցանեն ի դուռն թագաւորին»: 986 թ. մարմնական խոշտանգումների ենթարկվելուց հետո հույն հոգևորականության կողմից բանտում սպանվում է Սեբաստիայի հայազգի ավագերեց Գաբրիելը: Իմաստությամբ լի այս հոգևորականը մինչև վերջ մնաց «քաջապինդ ի հաւատս աստուածեղէնս»: Սեբաստիայի մետրոպոլիտը մինչև անգամ արգելեց քաղաքում հնչեցնել հայոց ժամերգության ձայնը: Այս արգելքը շարունակվեց մինչև 1000 թ., երբ Վասիլը Տայքին տիրելու նպատակով Տարսոն քաղաքից եկավ, և «ել նա ի կողմանս Մելտիոյ»<sup>52</sup>:

Հունական եկեղեցու ճնշումն այնքան ուժեղ էր, որ մի շարք հայ հոգևորականներ, որոնց թվում Սեբաստիայի Սիոն<sup>53</sup> և Լարիսայի Հովհաննես եպիսկոպոսները, ընդունեցին քաղկեդոնականություն՝ «ի բաց կալով ի

47 Տե՛ս **Каждан А.**, Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ер., 1975, էջ 140-141:  
48 Տե՛ս «Հայոց պատմություն», հատ. Բ, Միջին դարեր (IV դար-XXVII դարի առաջին կես), գիրք Բ (IX դարի կես-XXVII դարի առաջին կես), էջ 173:  
49 Տե՛ս **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Է, էջ 754:  
50 10-րդ դարի վերջերին Սեբաստիայի բնակչության կեսը հայ էր (տե՛ս **Գեյցեր Հ.**, Համառոտության բիզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901, էջ 263): Սեբաստիան մտնում էր կայսրության հիմնած հայկական բանակաթեմի մեջ:  
51 **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ի, էջ 769:  
52 Նույն տեղում, էջ 822:  
53 Մինչև 10-րդ դարի երկրորդ կեսը Սեբաստիայի և Մելիտինեի գավառները չունեին հայոց հայրապետի ենթակայությամբ գործող եպիսկոպոսություններ: Սեբաստիայում և Մելիտինեում հայ ազգաբնակչության թվաքանակի մեծացումը ստիպեց խաչիկ կաթողիկոսին հիմնել եկեղեցական թեմեր և ձեռնադրել եպիսկոպոսներ: Սեբաստիայի առաջին հայ եպիսկոպոս է հիշատակվում Սիոնը (985-1029) (տե՛ս **Աղեքսանդրեան Ա.**, Պատմություն ականաւոր քաղաքին Սեբաստիոյ, Վենետիկ, 1911, էջ 167-168):

Վէ՛մ համահայկական հանդես, ԺԲ (ԺԵ) տարի, թիվ 3 (71), հուլիս-սեպտեմբեր, 2020

միաւորութենէն Հայոց»<sup>54</sup> : Հույն հոգևորականների վերաբերմունքից ճնշված հայերը նամակ են գրում Վասիլ Բ կայսրին՝ խնդրելով ազատել իրենց հույների բռնություններից: Իր հերթին կայսրին նամակ է գրում Սեբաստիայի հույն մետրոպոլիտը՝ ամբաստանելով հայերին Եվտիքեսի ծայրահեղ միաբնակությանը հետևելու և այլոց դրանում ներգրավելու համար<sup>55</sup>:

Միաժամանակ հույները գործածությունից չեն հանում իրենց կարևոր զենքերից մեկը՝ հրամայական-մեղադրական ոճի նամակագրությունը՝ ուղղված հայ հոգևորականությանը<sup>56</sup>: Կայսերական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները՝ «մետրապալիտն այն եւ այլ մետրապալիտք սկսան թուղթս մեծամեծս գրել առ Տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս»<sup>57</sup>: Դատելով պատմիչի այսպիսի ձևակերպումից՝ հայերի կրոնական հալածանքները չեն սահմանափակվել միայն Սեբաստիա և Մելիտինե քաղաքներով: Հետապնդումները տարածված են եղել նաև կայսերահպատակ այլ քաղաքներում: Հույն հոգևոր պետերի նամակները, ցավոք, չեն պահպանվել, սակայն հայերի պատասխան գրություններից երևում է, որ դրանք «համեմված» են եղել իրենց հասցեին վիրավորական արտահայտություններով: Ամենասարսափելին այն է, որ հայերին «բազում անգամ եռետիկոս»<sup>58</sup> են հորջորջում: Նրանք բացահայտորեն պահանջում էին հրաժարվել հայոց դավանանքից և ընդունել հունական եկեղեցու դավանանքը: Հույն հոգևորականների այս մարտավարությունը նորություն չէր: Դեռևս 862 թ. Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտը դավանաբանական բովանդակությամբ նամակներ է գրել իշխանաց իշխան Աշոտին և Զաքարիա Չագեցի կաթողիկոսին (855-876)՝ առաջարկելով ընդունել քաղկեդոնականություն<sup>59</sup>: Փոտի սկսած գործը շարունակել է պատրիարք Նիկողայոս Միստիկոսը՝ նամակներ ուղարկելով հայոց թագավոր Սմբատ Ա-ին և կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն<sup>60</sup>: Ի տարբերություն նախորդների՝ խնդրո առարկա նամակագրությու-

54 Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ի, էջ 769:

55 Տե՛ս Չամչյան Մ., Հայոց պատմություն, հատ. Բ, Եր., 1984, էջ 874:

56 Հայ-հունական նամակագրությունների ոճի վերաբերյալ հետաքրքիր դիտարկում է անում ակադեմիկոս Հ. Բարթիկյանը՝ ասելով, որ խնդրական ոճի նամակներով հույները նպատակ ունեին ապահովելու հայերի բյուզանդանոս դիրքորոշումը, իսկ հրամայական և պահանջող ոճի նամակները վկայում են Բյուզանդիայի ռազմաքաղաքական կացության մասին (տե՛ս Բարթիկյան Հ., Կիլիկյան Հայաստանը և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծախքերը, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատ. 1, Եր., 2002, էջ 646-647):

57 Ստեփանոս Տարանեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. Ի, էջ 770:

58 Նույն տեղում, հանդես Գ, գլ. ԻԱ, էջ 770: Միաբնակ հայերին հերետիկոս հորջորջելու վերաբերյալ սկզբնաղբյուրներում պահպանվել են այլ տեղեկություններ ևս, օրինակ՝ Սև լեռան հայադավան վանականներին Ռոմանոս III կայսրը (1028-1034) անվանում է «բազմութիւն հերետիկոսացն» (տե՛ս «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտոյ», աշխատասիր. Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 43, տե՛ս նաև «Իբերիայում, Միջագետքում, մինչև Լիկանդոս ու Մելիտինե և կից Հայաստանում ապողղ հերետիկոս բնակիչները», «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, էջ 233):

59 Տե՛ս «Գիրք թղթոց. Մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 279-294:

60 Տե՛ս Բարթիկյան Հ., Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի 101-րդ և 139-րդ թղթերը՝ ուղղված Հովհաննես Դրասխանակերտցուն և Սմբատ Ա թագավորին, ՊԲՀ, Եր., 1966, N 4, էջ 251-256:

նը հույները վարում էին բարձրաստիճան մետրոպոլիտների, բայց ոչ Կոստանդնուպոլսի պատրիարքի մակարդակով<sup>61</sup>:

Հանուն հայոց եկեղեցու անկախության և հավատի պաշտպանության Խաչիկ կաթողիկոսի հանձնարարությամբ գրվում է ծավալուն պատասխան «Թուղթ», որն իր կրոնափիլիսոփայական հիմնավորումներով և փաստարկումներով դավանաբանական գրականության լավագույն նմուշներից է<sup>62</sup>: Ասողիկը, որը հայոց եկեղեցու միաբնակ դավանանքի ջատագով էր, այս նամակն ամբողջությամբ զետեղել է իր «Պատմության» մեջ: Հայ վարդապետները «քաջակորով իմաստիք» պատասխան են գրում արժանի հակահարված տալով հույներին: Նամակը չունի անձնավորված հեղինակ. այն կազմվել է հոգևորականների խմբի կողմից, որում, ըստ Ասողիկի, ընդգրկված են եղել «յառաջ ասացեալ վարդապետքն»<sup>63</sup>:

Խաչիկ կաթողիկոսի նամակը հասցեագրված է «պատուական գլուխ եպիսկոպոսաց եւ մետրապալիտ մեծ վիճակիդ Սեբաստիոյ»՝ առանց, սակայն, վերջինիս անվան հիշատակության: Հակառակ հայերի կրոնական զգացումները վիրավորող հույն հոգևորականների խոսքերի՝ հայ վարդապետները նախընտրում էին պատասխանել զուսպ, բայց խիստ ոճով՝ շեշտելով, որ «մեք ոչ թշնամութեան բանս հակառակ թշնամանացն ձերոց գրեմք»<sup>64</sup>: Ավետարանական վկայակոչումներով և առաքելական գրվածքներից բերված քաղվածքներով հայ եկեղեցու հայրերը ընդդիմախոսում էին հույներին, պնդում, որ հույները սուտ վարդապետություն են քարոզում, Ս. Գրքի և եկեղեցու հայրերի սխալ մեկնաբանություններով մոլորության մեջ են գցում մարդկանց, այնպիսի մտքեր են հնչեցնում, որ «ոչ գրեցին եւ ոչ քարոզեցին Առաքեալքն»<sup>65</sup>: Ավետարանից բերված մեջբերումներից հետո պատասխանի հեղինակները դիմում էին ավելի ազդու գեներալ. հերքում էին հույների դավանանքը հենց նրանց եկեղեցու նշանավոր հայրերի խոսքերով. «Մեք ո՛չ միայն զի նոքաք եւ ի ձեռն նոցա բան դնեմք ընդդէմ բաժանողացդ, այլ եւ ո՛չ ազգական եւ սեռն ընտանի եւ ուսուցիչ վարդապետաք մերովք. Այլ որպէս ընդ Հրէայսն ո՛չ աւետարանական եւ առաքելական վարդապետութեամքք վիճինք, այլ ի նոցունց մարգարէիցն հաւանեցուցանեմք՝ սոյնպէս եւ ընդ ձեզ՝ ի

61 Խնդրո առարկա ժամանակաշրջանում Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռը հաջորդաբար զբաղեցրել են երեք պատրիարքներ՝ Անտոնիոս Ստողիտեանը (974-979), Նիկողայոսը (980-992), որը հայտնի էր Խրիստվերգես մականունով, և Սիսինոսը (996-1000) (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, էջ 53, 66, 76, ծանոթ. 318):

62 «Թուղթ» մեզ է հասել խիստ աղավաղված, բառերի կրճատումներով, երբեմն նաև անհասկանալի արտահայտություններով (տե՛ս «Ստեփանոսի Տարսնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», քնն. բնագիր՝ Ստ. Մալխասյանցի, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 382, ծանոթ. 115, տե՛ս նաև Մանուկեան Գ., Ստեփանոս Տարսնեցին և նրա «Պատմութիւն տիեզերական» երկասիրութիւնը, Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, նշվ. աշխ., առաջաբան, էջ 629):

63 Վաստակաշատ հայագետ Ն. Ալիմյանը կարծում է, որ այս «Թուղթը» Ասողիկի պատմության բնագիր ներմուծվել է հետագայում ոմն մոլեռանդ հակաքաղվեթոնականի կողմից (տե՛ս Ալիմեան Ն., Ստեփանոս Ասողիկ եւ Կոմսածագք, «Հանդէս ամսօրեայ», 1955, N 3-6, էջ 121):

64 Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԻԱ, էջ 770:

65 Նույն տեղում, էջ 773-774:

վարդապետաց ձերոց եւ որ յաշխարհ ձեր պայծառացան՝ բանագիր լինիմք յոգնագան եւ բազմապատիկ պիտառութեամբք, զի առաւել երեւելի եւ նշանաւոր յաղթութիւնն լիցի լընդդէմ՝ ամենայն հերձուածողաց եւ պիղծ ասանդիցն»<sup>66</sup>: Վկայաբերվում են Քրիստոսի երկու բնությունը հերքող ծանրակշիռ թեզեր Աթանաս և Կյուրեղ Ալեքսանդրացիների, Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Աստվածաբանի, Հովհան Ոսկերեքանի գրվածքներից: Հայ հեղինակները մեղադրում էին հույներին պատկերներ պաշտելու մեջ, հիմնավորում հայերի՝ պատկերները լվանալու և օծելու արարողությունը: Մերժում էին նվիրական բաժակին ջուր խառնելը և ներքինիներին քահանայական կարգ շնորհելը, հանցանքը քահանային չխստտվանելը: Ծաղրում էին հույն հոգևորականներին երկար վարսեր պահելու համար՝ «ապտակելով» Պողոս Սամոսատցու խոսքերով. «Այր եթէ գիսաւոր է անարգանք են նմա»: Հեզնում էին հույներին՝ ասելով, որ, Քրիստոսի երկու բնությունից բացի, կարող էին «այլ եւս բնութիւն խնդրել»<sup>67</sup>:

Անշուշտ, հայերին հերետիկոս հորջորջելու առիթներից մեկը եվտիքեյան աղանդին հարելու ծանր մեղադրանքն էր, ուստի հայ վարդապետները հերքում էին առաջադրված մեղադրանքը՝ պատասխանելով, որ «Նգովեմք եւ ատար վարկանիմք» Եվտիքեսի հերձվածողական վարդապետությունը: Հայ վարդապետները հպարտությամբ հայտարարում էին, որ հավատարիմ են Գրիգոր Լուսավորչի ձեռամբ սկզբնավորված և սուրբ Սահակի ու սուրբ Մաշտոցի ավանդությամբ փոխանցված հայոց դավանանքին, որը «պահեմք զգեղեցիկ աւանդութիւն հայրենատուր ժառանգութեանցն եւ իբրեւ զգոյն մարմնի՝ անշրջելի մնայ ի սիրտս եւ յոգիս մեր»<sup>68</sup>: Նամակը եզրափակում էին՝ հորդորելով հույներին խոստովանել Քրիստոսի մեկ և անբաժանելի բնությունը, ընդունել Երրորդության պաշտամունքը, ճանաչել հայոց եկեղեցու ճշմարիտ դավանանքը:

Այս երկարաշունչ նամակի բովանդակությունն աներկբայորեն ցույց է տալիս, որ հայ հոգևորականները խորապես համոզված են եղել սեփական դավանանքի սկզբունքների ճշմարտացիության մեջ: Հենց այդ համոզմունքն է, որ վստահություն էր ներշնչում հայ հոգևորականությանը և անգամ թույլ տալիս բարձրից նայել հակառակորդին<sup>69</sup>:

Հայոց կաթողիկոսի պատասխանը, ըստ Ասողիկի, ցնցող ազդեցություն է ունենում Սեբաստիայի մետրոպոլիտի վրա, որը «ամառթալից լինէր»: Նույն մետրոպոլիտին անփառունակ և դաժան մահ էր սպասվում հայերի ձեռքով: Վասիլ Բ-ն 988 թ. հաշտության առաքելությամբ նրան ու-

66 Նույն տեղում, էջ 794:

67 Նույն տեղում, էջ 774:

68 Նույն տեղում, էջ 772:

69 Տե՛ս **Տեր-Միքելեան Ա.**, Հայաստանեայց եկեղեցին եւ Բիզանդեան ժողովոց պարագայք, Մոսկուա, 1892, էջ 149:

ղարկում է բուլղարների երկիր<sup>70</sup>: Որպես հաշտության նախապայման՝ բուլղարաց թագավորը խնդրում է կայսեր քրոջ ձեռքը: Կայսրն իր աղա-խիններից մեկին, որը շատ նման էր իր քրոջը, մետրոպոլիտի հետ ուղարկում է Բուլղարիա<sup>71</sup>: Խաբեությունը շուտով բացահայտվում է, իսկ մետրոպոլիտին Կոնստանդապոլիսում կոչվող հայագրի եղբայրները որպես «շուն եւ խաբեբայ ցաւդուն եւ ժժան պատեալ զնովա՝ հրով տոչորեցին»<sup>72</sup>:

Մեզ է հասել Խաչիկ կաթողիկոսի հանձնարարությամբ գրված նաև երկրորդ պատասխան նամակը, որը տեղ է գտել «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ: Այս նամակի բովանդակությունն ավելի համակարգված է, պահպանված է շարադրանքի ներքին տրամաբանությունը: Ի տարբերություն առաջին թղթի՝ հայտնի է, որ այս նամակի հեղինակն է Կամրջաձորի վանքի մեծահոջակ դպրոցի վարդապետ «ինաստակն Սամուէլ, բազմաշնորհն ի գիտութիւնս Գրոց սրբոց եւ յերգս երաժշտութեանց»<sup>73</sup>: Ասողիկն անձամբ ծանոթ է եղել Սամվել Կամրջաձորեցուն: 10-րդ դարի վերջերին Սամվելը մասնակցել է Կոստանդնուպոլսում կազմակերպված հայ և հույն գործիչների դավանաբանական վեճերին, պաշտպանել հայոց դավանանքի սկզբունքները<sup>74</sup>:

Նամակն ուղղված է «սիրելի եղբայր և պատուական գլուխ եպիսկոպոսաց» Թեոդորոսին՝ «մետրոպոլիտ մայրաքաղաքիդ Մելեոփնոյ»<sup>75</sup>: Սամվել վարդապետը Թեոդորոսին պատասխանում է «վայելուչ և ցանկալի բանիք»<sup>76</sup>: Սամվելի պատասխանի բովանդակությունը թույլ է տալիս հասկանալ Թեոդորոս մետրոպոլիտի՝ մեզ չհասած շարադրանքի գլխավոր ուղերձները և նկատել հոխորտաբան ոճը: Հույն մետրոպոլիտը հորդորում է մոլորյալ ազգերին, այդ թվում՝ և հայերին, ընդունել հույների «հաւատս ճշմարիտս»: Հունական եկեղեցու մեծամիտ հովվապետը կայսրությունն անվանում է «գաւազանն երկաթի որ մանրէ զաշխարհս»՝ բացահայտորեն ակնարկելով իր եկեղեցու ուժի աղբյուրը և իր խոսքի քաղաքական ենթատեքստը: Ամբարտավան հույն հոգևորականը հայոց կաթողիկոսին նույնիսկ հորդորում է ետ կանգնել «Հայաստանեայց գրոց եւ ի ձայնից, ապաշխարութեամբ եւ զղջմամբ գրէ՝ առ կայսր եւ պատրիարզն ի թագաւորեալ քաղաքն, եւ միացի՛ր ի սուրբ հաւատս, եւ կեցցես»<sup>77</sup>: Հայոց

70 Մեծանուն քյուզանդագետ Ն. Աղոնցի կարծիքով՝ հիշատակված հոգևորական ղեկավարը Սեբաստիայի Թեոդորոս մետրոպոլիտն է, որը գրել է Վասիլի թագավորության պատմությունը (տե՛ս Արոնց Ն., Բուլղարների արքա Սամուել Հայկազնը, Երկեր, հատ. Ե, Եր., 2012, էջ 426):

71 Վասիլ Բ-ն իր քույր Աննային կնության էր տվել Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչին (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, Հովհաննես Սկիլիցես, էջ 72, Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԽԳ, էջ 823):

72 Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, նշվ. աշխ., հանդես Գ, գլ. ԽԲ, էջ 800:

73 Նույն տեղում, էջ 751:

74 Հայտնի նամակից բացի՝ Սամվել Կամրջաձորեցին գրել է նաև «Թուղթ ընդդէմ երկաթակաց, ի խնդրոյ իշխանի միոյ, որ մականունն Ոսկեծեռն կոչիլը» վերնագրով նամակ, հարստացրել է «Տօնապատճառ» ժողովածուն իր մեկնողական ճառերով (տե՛ս Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Դ, Եր., 1942, էջ 383):

75 «Գիրք թղթոց», էջ 302:

76 Մատթէոս Ուշալեցի, նշվ. աշխ., էջ 39:

77 «Գիրք թղթոց», էջ 305:

հայրապետը Սամվելի գրչով հայտարարում է, որ հույներն անշնորհակալ գործ են բռնել և ճիշտ կանեն՝ իրենց հավատքը քարոզեն այն ազգերին, որոնք «ոչ ճանաչեն զԱստուած, և ոչ հնազանդին աւետարանի փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Հայերի հավատը խարսխված է Ավետարանի կենսաբեր լույսի, երեք տիեզերական ժողովների կանոնների ու բանաձևերի, Գրիգոր Լուսավորչի վարդապետության և տիեզերական եկեղեցու հայրերի ճշմարիտ ուսմունքի վրա: Սամվելը վկայակոչում է տիեզերական եկեղեցու մոտ երեք տասնյակ հայրերի անուններ, որոնց վարդապետությունը ընկած է հայոց հավատքի հիմքում, և ավելացնում. «...տքա են վարդապետք մեր և ուսուցիչք, և զայլ ոք բնաւ ոչ գիտեմք»<sup>78</sup>: Շեշտում է, որ Քաղկեդոնի ժողովից ի վեր հայերը չեն շեղվել իրենց ուղուց, տուրք չեն տվել «նորաձայնութիւն հաւատոյ և կրանից»: Հայերն իրենց դավանանքին հավատարիմ մնալու պատճառով բազմիցս «հալածեալք յամենայն ազգաց, այլ ոչ երբէք լքեալք ի հաւատս»<sup>79</sup>: Սուրբ հայրերի խոսքերով և գրվածքներով Սամվելը հերքում է Թեոդորոսի առաջարկները, մատնանշում հույների դավանած «երկու բնություն» բանաձևի խոցելի կողմերը, կրկին հիշեցնում, որ «առաքեալք և մարգարէք և աւետարանիչք մի ասացին զմարմնացեալ Բանն Աստուած, միով բնութեամբ, կամաւք և զարութեամբ»: Միաժամանակ հիշեցնում է, որ հայերը միակը չեն աշխարհում, որ մերժում են Քաղկեդոնի ժողովի բանաձևը: Քաղկեդոնականությունը չեն ընդունում նաև «Աղուանք, Լփինք, Կազփք, Կիղքք, Ատորեստանեայք՝ որք են Յակոբիկ, ամենայն Եգիպտոս, Եթիոպա մեծ, Արաբիա, Արապիւնար, և ամենայն աշխարհն Հնդկաց»<sup>80</sup>: Նամակն ավարտվում է մեղմ, բայց հաստատուն տոնով: Ակնարկելով հույների ջանքերի անհեռանկարայնությունը՝ Սամվելը հիշեցնում է, որ 500 տարի շարունակ բազում անգամներ քաղկեդոնականություն են պարտադրել տարբեր թագավորներ, հայրապետներ, իմաստասերներ, վարդապետներ, սակայն «ոչ կարացին զմիանգամ քակեալն վերստին շինել»<sup>81</sup>: Նամակի արդյունքների մասին, ըստ էության, ոչինչ հայտնի չէ՝ բացի Ուռհայեցու մի կասկածելի տեղեկությունից, թե «եղեւ իսկ հաճելի թուղթն այն ամենայն լսողացն, եւս առաւել մեծարեալ եղեւ առաջի Թէոդորոսի պատրիարգին Հռոռմոց»<sup>82</sup>:

Այս թղթակցությունները, ինչպես նկատում է Մ. Չամչյանը, չէին նպաստում հայերի և հույների միաբանության հաստատմանը, չէին թուլացնում հայ և հույն հոգևորականների լարվածությունը, ընդհակառակը՝ ավելի էին խորացնում ատելությունը նրանց միջև<sup>83</sup>: Պետք է ասել, որ երկու նա-

78 Նույն տեղում, էջ 307:

79 Նույն տեղում, էջ 306:

80 Նույն տեղում, էջ 322:

81 Նույն տեղում:

82 Մատթեոս Ուռհայեցի, Աշվ. աշխ., էջ 39:

83 Տե՛ս Չամչյան Մ., Աշվ. աշխ., էջ 874:

մակներն էլ արտահայտում են հայոց եկեղեցու միասնական դիրքորոշումը, որն ավելի սկզբունքային է, քան քաղաքական իշխանության դիրքորոշումը:

Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի նամակների բովանդակությունը հստակ պատկերացում է տալիս ժամանակի հոգևոր կյանքում տիրող անհաշտ մթնոլորտի մասին: «Անհարկի է կասկածի ենթարկելն իսկ կրոնական այն անկեղծությունը, որով վիճաբանող կողմերը պաշտպանում էին իրենց դավանանքը: Սակայն չի կարելի նաև քողարկել, որ իրեն զգալ էր տալիս հատկապես ազգային զգացողությունը, որը գործում էր և պայքարում այդ ձևով և նշանավորում, այսպիսով, շրջադարձ հայ-բյուզանդական հարաբերություններում»<sup>84</sup>, - եզրակացնում է ականավոր բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցը:

### Եզրակացություններ

Այսպիսով, ի մի բերելով շարադրանքը, հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- Վերջ դնելով հայրապետական իշխանության երկփեղկվածությանը՝ Խաչիկ Ա Արշարունին (973-992) վերականգնում է հայոց եկեղեցու նվիրապետական միասնականությունը, բարձրացնում կաթողիկոսության միավորիչ դերն ու հեղինակությունը Հայաստանում և Հայաստանից դուրս: Նրա աթոռակալումը նշանավորվում է եկեղեցու նվիրապետական կառույցի ամրապնդմամբ, նոր եկեղեցիների, վանքերի և ուսումնական կենտրոնների հիմնադրմամբ ու զարգացմամբ:
- Խաչիկ Ա Արշարունու հովվապետության օրոք երկրի քաղաքական իշխանությունը և եկեղեցին գործում էին փոխհամաձայնության մթնոլորտում, եկեղեցին իր կարելիություններով աջակցում էր պետության ամրապնդմանն ուղղված Բագրատունիների ձեռնարկներին:
- Խաչիկ Ա-ն Հայաստանում հիմնում է հոգևոր կազմակերպական նոր միավորներ: Նախիջևան և Տաշիրք գավառներում հոգևոր թեմերի ու եպիսկոպոսական աթոռների հիմնադրմամբ հայոց հայրապետը ամրապնդում է պետության և ընդլայնում եկեղեցու սահմանները:
- Ի պատասխան Բյուզանդական կայսրության արևելյան նահանգներում, մասնավորապես Սեբաստիայում և Մելիտինեում հույն հո-

84 Ադոնց Ն., Լիկանդոսի բանակաթեմը հայ-բյուզանդական հարաբերություններում, «Երկեր», հատ. Ե, Եր., 2012, էջ 238:



գևորականության կողմից հայերի նկատմամբ գործադրված բռնություններին՝ հայոց հայրապետը հոգևոր թեմեր է ստեղծում նաև Հայաստանի աշխարհագրական սահմաններից դուրս: Եպիսկոպոսական աթոռներ հիմնելով Անտիոքում, Տարսնում, Իսավրիայում՝ Խաչիկ Ա-ն ընդլայնում է հայոց եկեղեցու աշխարհագրությունը: Խաչիկ Ա-ի նման քաղաքականության շնորհիվ Հայաստանի սահմաններից դուրս ապրող հայությունը՝ որպես հավաքական ամբողջություն, դառնում է ավելի կազմակերպված, խորանում է նրա ազգային ինքնագիտակցությունը, ուժեղանում դիմադրողականությունը՝ ազգային ինքնության դեմ իրականացվող ոտնձգությունների նկատմամբ:

- 10-րդ դարի վերջերին վերսկսված հայ-հունական դավանաբանական վեճերում և նամակագրություններում կայսերական եկեղեցու պետերը հայերին մեղադրում են «ուղիղ դավանանքից» շեղվելու մեջ, ջանում հայոց կաթողիկոսին ապացուցել քաղկեդոնականության առավելությունները: Նրանք փորձում են կյանքի կոչել եկեղեցական միության տխրահռչակ գաղափարը: Հայ հոգևորականությունը ցուցաբերում է միասնական ու անզիջում դիրքորոշում՝ անվերապահորեն համոզված լինելով իր դավանաբանական սկզբունքների ճշմարտացիության մեջ: Հղում անելով տիեզերական եկեղեցու հայրերի ուսմունքներին և առաջին երեք տիեզերական ժողովների բանաձևերին՝ հայ վարդապետներն իրենց դավանաբանական նամակներում հիմնավոր փաստարկներով հերքում են հույների երկբնակ դավանության սկզբունքները, հիմնավորում հայոց ուղղադավան հավատքը:
- Կայսրության նետած մարտահրավերներին հայ հոգևորականությունը պատասխանում է եկեղեցու նվիրապետությունն ամրապնդելու ձեռնարկներով, մարտնչող վարքագծով, ինչն այդ աստիճան նկատելի չէր Հայաստանի քաղաքական իշխանության դեպքում: Ուստի Հայաստանը շարունակում էր մնալ հակաքաղկեդոնական պայքարի կենտրոններից մեկը: Իսկ հայոց եկեղեցու գործունեության մեջ գերիշխող էր դառնում հայության ճակատագրի նկատմամբ ամբողջական պատասխանատվության գիտակցումը:
- Մերժելով բյուզանդական եկեղեցու՝ Հայաստանյայց եկեղեցու հետ ուղղահայաց հարաբերություններ հաստատելու ձգտումները՝ հայ հոգևորականությունը պայքարում էր ոչ միայն իր եկեղեցական նվիրապետության անկախությունն ու միասնությունը ամրապնդելու, այլև դավանական ինքնատիպությունն ու անաղարտությունը պահելու համար:

**Վարդան Ա. Ալեքսանյան** – հեղինակ է ավելի քան մեկ տասնյակ գիտական հոդվածների: Զբաղվում է հայոց եկեղեցու պատմության հիմնահարցերով: Գիտական ուսումնասիրությունները վերաբերում են Սյունիքի եպիսկոպոսության պատմությանը վաղ և զարգացած ավատատիրության դարաշրջաններում:

Էլեկտրոնային հասցե՝ vardanalexanyan406@gmail.com

## Summary

### **THE REIGN OF CATHOLICOS KHACHIK I ARSHARUNI** And the Armenian-Byzantine church confrontation at the end of the 10th century

Vardan A. Aleksanyan  
*Candidate of Sciences in History*

**Key words** - Argina, diocese, church, theological polemic, religious correspondence, Armenian orthodox faith, Chalcedonism, Metropolitan, Sebastia, Asoghik, Samvel Kamrjadzoretsi.

In the last quarter of the 10th century Armenia took the path of political, economic and cultural development. **Constructive** relations were created between the political and religious authorities of Armenia. The Armenian Church contributed to the efforts of the Bagratids to strengthen the state.

Having ascended the Patriarchal throne, Khachik I Arsharuni (973-992) overcame the bifurcation of spiritual power and unified the Armenian clergy around the Catholicosate. He undertook construction activities, improved the spiritual center of Armenia – Argina. Khachik Arsharuni created new dioceses and episcopal thrones in Nakhijevan and Tashirk. The foundation of new dioceses strengthened and expanded the spiritual borders of Armenia. Due to the increase of the Armenian population in Northern Syria, Cilicia and Cappadocia, it became necessary to establish episcopal thrones, which were designed to satisfy the spiritual needs of the Armenians living there. By creating dioceses outside the borders of Armenia, Catholicos Khachik Arsharuni promoted the unification of Armenians and prevented the assimilation of Armenians in a foreign ethnic environment. The expansion of the geography of the Armenian Church contributed to the growth of a sense of national identity, the immunity against encroachments on the Armenian national identity strengthened.

At the end of the 10th century Byzantine expansionary policy aimed at the assimilation of Armenians intensified. The Armenian population was subjected to violence by the Greek clergy of Sebastia and Melitina, which forced the Armenians to adopt the Greek faith. Under Khachik, Armenian-Greek religious correspondence and theological polemic resumed. In their letters, the metropolitans of Sebastia and Melitina urged the Armenian clergy to accept Chalcedonism. Referring to the teachings of the fathers of the Universal Church and the position of the first three ecumenical councils, the Armenian scholars in their letters thoroughly refuted the principles of the Greek belief and justified the correctness of the Armenian Monophysite faith. In the letters which were saved in the composition of the medieval Armenian historian Asoghik and in the Book of Letters, the Armenian clergy manifested a single unyielding position. The Armenian clergy were more indomitable against Byzantine challenges than the political authorities.

Резюме

## ПРЕСТОЛОПРАВЛЕНИЕ КАТОЛИКОСА ХАЧИК I АРШАРУНИ

И армяно-византийское церковное противоборство  
в конце 10-го века

Вардан А. Алексанян

*Канд. ист. наук*

**Ключевые слова** - Аргина, епархия, церковь, богословская полемика, религиозная переписка, армянская православная вера, халкидонитство, митрополит, Себастья, Асохик, Самвел Камрджадзоречи.

В последней четверти 10-го в. Армения стала на путь политического, экономического и культурного роста. Между политическими и религиозными властями Армении были созданы конструктивные отношения. Армянская церковь содействовала усилиям Багратидов, направленным на укрепление государства.

Взойдя на патриарший престол, Хачик I Аршаруни (973-992) преодолел разобщенность духовной власти и сплотил армянское духовенство вокруг католикосата. Он предпринял строительные работы, благоустроил духовный центр Армении Аргина. Хачик Аршаруни создавал новые епархии и епископские престолы в Нахиджеване и Таширке. Основанием новых епархий укреплялись и расширялись духовные границы Армении. В связи с увеличением

численности армянского населения в Северной Ассирии, Киликии и Кападокии возникла необходимость учредить епископские престолы, которые были призваны удовлетворить духовные потребности проживающих там армян. Создав епархии за пределами Армении, католикос Хачик Аршаруни способствовал объединению армян и предотвратил ассимиляцию в чужой этнической среде. Расширение географии Армянской церкви способствовало росту чувства национальной идентичности, усилился иммунитет против посягательств на национальную идентичность.

В конце 10-го в. усилилась экспансионистская политика Византии, направленная на ассимиляцию армян. Армянское население подвергалось насилию со стороны греческого духовенства Себастии и Мелитине, которое заставляло армян принять греческую веру. При Хачике возобновилась армяно-греческая религиозная переписка и богословская полемика. Митрополиты Себастии и Мелитине в своих письмах настоятельно требовали от армянских духовных деятелей принять халкидонитство. Ссылаясь на учение отцов Вселенской церкви и на положения первых трех вселенских соборов, армянские ученые отцы в ответных письмах основательно опровергали принципы греческого вероисповедания и обосновывали правоту армянской монофизитской веры. В письмах, которые сохранены в сочинении средневекового армянского историка Асохика и в «Книге писем», армянское духовенство проявляло единую принципиальную позицию. Против византийских вызовов армянское духовенство было более несгибаемым, чем политическая власть.

## REFERENCES

1. “Girk‘ t‘ght‘ots‘. Matenagrut‘iwn nakhneats’”, T‘iflis, “T. Rotinyants‘ yev M. Sharadze” hrat., 1901 (**In Armenian**).
2. “Haghbat yev Sanahin vank‘erē (976-1300)”, “Ararat”, Mayr Atoři pashtonakan hrat., 1901, Ye-Z (**In Armenian**).
3. “Hayots‘ patmut‘yun”, hat. B, Mijin darer (IV dar-XVII dari arajin kes), girk‘ B (IX dari kes-XVII dari arajin kes), Yer., “Zangak” hrat., 2014 (**In Armenian**).
4. “Kalvatsagrer yev tntesakan ayl gortsark‘neri veraberyal arkhivayin vaveragrer (976, 981, 1432, 1564, 1614 yev 1655-1839 t‘t.)”, prak I, arajabanov, tsanot‘agrut‘yunnerov yev bařaranov, kazmets‘` **Har. Abrahamyan**, Yer., HSSR Zhoghkomsovetin kits‘ petakan dzeragratur (Matenadaran), 1941 (**In Armenian**).
5. “Khach‘ik Kat‘ughikosi arajnoy kondakē p‘rkakan 976 t‘uin”, “Ararat”, Mayr Atoři pashtonakan hrat., 1868, G (**In Armenian**).
6. “Ktakagir Hrip‘simē ark‘ayadster yanun Nakhavkayi vanuts‘ Magharday”, “Ararat”, Mayr Atoři pashtonakan hrat., 1875, Ē (**In Armenian**).

7. “Ōtar aghbyurnerē Hayastani yev hayeri masin”, hat. 10, “Byuzandakan aghbyurner”, G, Hovhannes Skilit’s, t’argm., arajabanē yev tsanot’. **Hr. Bart’ikyani**, Yer., HSSH GA hrat., 1979 **(In Armenian)**.
8. “Patmut’iwn Aristakisi Lastivertts’woy”, ashkhatacir. **K. Yuzbashyani**, Yer., 1963 **(In Armenian)**.
9. “Step’annosi Siwneats’ Yepiskoposi Patmut’iwn Tann Sisakan”, I loys ēntsayeats’ Mkrkich’ Ēmin, Moskva, 1861 **(In Armenian)**.
10. “Step’anosi Tarōnets’woy Asoghkan Patmut’iwn tiezerakan”, k’nn. bnagir’ **St. Malkhasyants’i**, S. Peterburg, 1885 **(In Armenian)**.
11. “Taregirk’ Smbatay Sparapeti”, P’ariz, 1859 **(In Armenian)**.
12. **Achařyan H.**, Hayots’ andznanunneri bararan, hat. D, Yer., 1942 **(In Armenian)**.
13. **Adonts’ N.**, Bulgharneri ark’a Samuel Haykaznē, Yerker, hat. Ye, Yer., 2012 **(In Armenian)**.
14. **Adonts’ N.**, Likandosi banakat’emē hay-byuzandakan haraberut’yunnerum, Yerker, hat. Ye, Yer., 2012 **(In Armenian)**.
15. **Aghek’sandrecan A.**, Patmut’iwn akanawor k’aghak’in Sebastioy, Venetik, 1911 **(In Armenian)**.
16. **Akinean N.**, Step’anos Asoghnik yew Komsadzagk’, “Handēs amsōreay”, 1955, N 3-6 **(In Armenian)**.
17. **Alishan Gh.**, Sisakan, Venetik, 1893 **(In Armenian)**.
18. **Bart’ikyan H.**, Kilikyan Hayastanē yev Byuzandakan kaysrut’yan yekeghets’akan p’okhharaberut’yunnerē yev drants’ k’aghak’akan tsalk’erē, Hay-byuzandakan hetazotut’yunner, hat. 1, Yer., 2002 **(In Armenian)**.
19. **Bart’ikyan H.**, Kostandnupolsi patriark’ Nikoghayos Mistikosi 101-rd yev 139-rd t’gh’t’erē’ ughghvats Hovhannes Draskhanakertts’un yev Smbat A t’agavorin, “Patmabanasirakan handes”, Yer., 1966, N 4 **(In Armenian)**.
20. **Ch’amch’yan M.**, Hayots’ patmut’yun, hat. B, Yer., 1984 **(In Armenian)**.
21. **Gelts’er H.**, Hamarotut’iwn biwzandakan kaysrneri patmut’ean, Vagharshapat, 1901 **(In Armenian)**.
22. **Hasrat’yan M.**, Arginayi kat’oghiken, “Handēs amsōreay”, 1977, N 1-12 **(In Armenian)**.
23. **Yovsēp’ean G.**, Yishatakarank’ dzeragrats’, hat. A, Ant’iliyas, 1951 **(In Armenian)**.
24. **Iskanyan V.**, Hay-byuzandakan k’aghak’akan haraberut’yunneri patmut’yunits’ (10-11-rd dd.), Yerevani Kh. Abovyani anv. hayk. mank. inst. git. ashkh. zhoghovatsu, N 6, Yer., 1957 **(In Armenian)**.
25. **Jalaleants’ S.**, Chanaparhordut’iwn I Metsn Hayastan, hat. A, T’iflis, 1842 **(In Armenian)**.
26. **Juzbashjan K.**, Armjanskije gosudarstva epoxi Bagratidov I Vizantija IX-XI vv., M., 1988 **(In Russian)**.
27. **Kazhdan A.**, Armjane v sostave gospodstvujush’ego klassa vizantijskoj imperii v XI-XII vv., Jer., 1975 **(In Russian)**.
28. **Khach’erean L.**, Hayagir dprut’ean usumnagitakan kentronnerē (V-XVI dd.), hat. A, Lizpon, 1998 **(In Armenian)**.
29. **Kirakos Gandzakets’i**, Patmut’yun Hayots’, ashkhatacirut’yamb K. Melik’-Ōhanjanyani, Yer., 1961 **(In Armenian)**.
30. **Mat’evosyan K.**, Anin mayrak’aghak’ yev kat’oghikosanist, “Patmabanasirakan handes”, Yer., 2008, N 3 **(In Armenian)**.
31. **Mat’evosyan R.**, Bagratunyats’ Hayastani petakan karuts’vatsk’n u varch’akan kargē, Yer., 1990 **(In Armenian)**.
32. **Matt’ēos Uřhayets’i**, Zhamanakagrut’iwn, Vagharshapat, 1898 **(In Armenian)**.

33. **Mkhit'ar Anets'i**, Matean ashkharhavēp handisaranats', ashkhatasirut'yamb H. Margaryani, Yer., 1983 **(In Armenian)**.
34. **Ōrmanyān M.**, Azgapatum, hat. A, Ējmiatsin, 2001 **(In Armenian)**.
35. **Pōghos Tarōnats'i**, T'ught' ēnddēm T'ēop'isteay, K. Pōlis, 1752 **(In Armenian)**.
36. **Rozen V.**, Imperator Vasilij Bolgarobojca, izvlechenija iz letopisi Jax'i Antioxijskogo, SPB, 1883 **(In Russian)**.
37. **Samuēl Anets'i yev sharunakoghner**, Zhamanakagrut'iwn, Yer., 2014 **(In Armenian)**.
38. **Shahkhat'uncan Yovh.**, Storagrut'iwn kat'oghikē Ējmiatsni yev hing gawarats'n Araratay, hat. B, Ējmiatsin, 1842 **(In Armenian)**.
39. **Skabalanovich N.**, Vizantijskoje gosudarstvo I cerkov' v XI veke, SPB, 1884 **(In Russian)**.
40. **Step'anos Tarawnets'i Asoghik**, Patmut'iwn Tiezerakan, "Matenagirk' Hayots'", ZhYe hator, Zh dar, Patmagrut'iwn, girk' B, Ant'iliās-Libanan, 2010 **(In Armenian)**.
41. **Tashean Y.**, Ts'uts'ak hayerēn dzeragrats', Vienna, 1895 **(In Armenian)**.
42. **Tēr-Mik'eleān A.**, Hayastaneayts' yekeghets'in yew Biwzandean zhoghovots' paraguayk', Moskua, 1892 **(In Armenian)**.
43. **Ter-Vardanean G., Sahakean J.**, Khach'ik A Arsharuni kat'oghikosi 976 t'uakani kondakē' truats Darashambi Surb Step'anos Nakhavkayi vank'in, "Ējmiatsin", 2012, N 7 **(In Armenian)**.
44. **Ukhtanēs yepiskopos**, Patmut'iwn hayots', "Matenagirk' Hayots'", ZhYe hator, ZH dar, Patmagrut'iwn, girk' B, Ant'iliās-Libanan, 2010 **(In Armenian)**.
45. **Vardan Bardzraberjets'i**, Patmut'iwn tiezerakan, I loys ēntsayeats' Mkrkich' Ēmin, Moskva, 1861 **(In Armenian)**.
46. **Voskean H.**, Magharday Nakhavkayi vank'in kondaknerē, "Handēs Amsōreay", 1941, N 7-12 **(In Armenian)**.
47. **Yeghiazaryan A.**, Ashot G Voghormatsi darashrjanē, mas A: Hayots' t'agavorut'yan verelk'ē (953-966), "Vēm", Yer., 2019, N 3 **(In Armenian)**.